ԱՐԵՎՄՏԱՀԱՅՈՒԹՅԱՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ 1915 ԹՎԱԿԱՆԻՆ

(Մեծ եղեռնի 70-ամյակի առթիվ)

ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Մ. Գ. ՆԵՐՍԻՍՅԱՆ

Հայ ժողովրդի բազմադարյան պատմության տարեգրությունը ունի ոչ քիչ արյունոտ էջեր։ Բայց այն, ինչ տեղի ունեցավ մեր ժողովրդի արևմտահայ հատվածի՝ արևմտահայության հետ XX դարի սկզբին, այդ արդեն մի ահավոր աղետ էր, իսկական ցեղասպանություն, որն իր ծավալով ու դաժանությամբ աննախադեպ էր մարդկության պատմության մեջ։

1915 թ., 70 տարի առաջ, թուրքական կառավարությունը, որի գլուխ էր կանգնած այսպես կոչված Երիտասարդ թուրքերի ծայրահեղ ազգայնամոլ կուսակցությունը, սրի քաշեց Օսմանյան լծի տակ հեծող մեկ ու կես միլիոն հայ բնակչությանը, իսկ նրա բնօրրան-հայրենիքը՝ Արևմտյան Հայաստանը, որի կազմի մեջ այն ժամանակ ընդգրկված էին Էրզրումի, Վանի, Մուշի, Տիգրանակերտի, Խարբերդի ու Սեբաստիայի նահանգները, ենթարկվեց սարսափելի ավերի ու կողոպուտի։

Ի՞նչ նպատակ էին հետապնդում այդ հրեշավոր ոճրագործության հեղինակները։ Լինելով թուրքական բուրժուա-կալվածատիրական ռեակցիոն վերնախավի դասակարգային շահերի արտահայտիչներ, երիտթուրքերը ձգտում էին իրականացնել իրենց պանթյուրքիստական ծրագիրը, որ նշանակում էր օսմանիզացիայի ենթարկել կայսրության բոլոր ազգությունները (հայերը, հույները, արաբները, քրդերը, հրեաները և այլն), բռնի ասիմիլյացիայի միջոցով թուրքացնել նրանց, ստեղծել միաձույլ, էթնիկական միատարր ու հզոր պետություն, որ ընդունակ լինի դիմելու նոր ագրեսիաների։

Ֆանատիկոսությամբ շնչող այդ շովինիստները իրենց առաջին հարվածը ուղղեցին արևմտահայության դեմ։ 1915 թ. ապրիլին երիտթուրքերի կուսակցության կենտրոնական կոմիտեն վերջնական որոշում ընդունեց ֆիզիկապես բնաջնջել ամբողջ արևմտահայությունը և ընդմիշտ վերջ տալ Հայկական հարցին։ Բարբարոսական այդ ծրագրի իրականացման համար հարմար առիթ և նպաստավոր պայմաններ ստեղծեց 1914 թ. բռնկված առաջին համաշխարհային պատերազմը, որից և օգտվեցին գազանաբարո ջարդարարները։

Կոտորածներն սկսվեցին դեռևս 1914 թ. վերջերին։ Սկզբում զորահավաքի պատրվակով թուրքական կառավարությունը բանակ ուղարկեց կռվելու ընդունակ հայ տղամարդկանց, բայց շուտով նրանք զինաթափ արվեցին և կոտորվեցին նենգորեն։ Այնուհետև ջարդարարները ծանր հարված հասցրին արևմտահայ մտավորականությանը։ 1915 թ. ապրիլին Կ. Պոլսում և մյուս քաղաքներում բանտարկվեցին և ապա աքսորվեցին ու բարբարոսաբար սպանվեցին հարյուրավոր անվանի գրողներ, հրապարակախոսներ, լրագրողներ՝ Գրիգոր Զոհրապը, Դանիել Վարուժանը, Սիամանթոն, Ռուբեն Սևակը, Ռուբեն Զարդարյանը, Սմբատ Բյուրատը, Կյուրճյանը, Տաղավարյանը, Քելեկյանը և հայ մշակույթի այլ ներկայացուցիչներ։

1915 թ. գարնանից երիտթուրքերն անցան խաղաղ ու անօգնական բնակչության ընդհանուր ջարդերին, դրանք իրականացնելով տեղահանությունների կամ այլ կերպ ասած՝ դեպորտացիայի անվան տակ։ Թուրքական կառավարությունը հրաման արձակեց արևմտահայ բնակչությանը Միջագետքի և Սիրիայի անապատները գաղթեցնելու մասին։ Բայց դա բացարձակ խաբեություն էր,

քանի որ իրականում ոչ թե գաղթ էր կազմակերպվում, այլ մասսայական կոտորածներ։ Եվ իսկապես, շուտով սկսվեց կանանց, երեխաների ու ծերունիների զանգվածային ոչնչացում։ Բնակչության մի մասը կոտորվեց տեղում՝ հայրենի գյուղերում ու քաղաքներում, մյուս մասը՝ անհայտ հեռուները տանող երկարաձիգ ճանապարհներին, մնացած մասը՝ Միջագետքի ու Սիրիայի անապատներում։

Կոտորածը համընդհանուր էր, ավերն ու թալանը՝ նույնպես։ Արևմտյան Հայաստանի ու Կիլիկիայի ոչ մի գավառ, գյուղ կամ քաղաք, Օսմանյան կայսրության սահմաններում գտնվող գրեթե ոչ մի հայկական համայնք ղերծ չմնացին ահռելի ջարդերից ու կողոպուտից։

Արևմտահայերի պատրիարք Զավեն արքեպիսկոպոս Եղյանը, որ ուներ ստույգ տեղեկություններ կատարվող անցքերի մասին և անձամբ ականատես եղավ թուրքական իշխանությունների շատ բարբարոսություններին, 1915 թ. դեկտեմբերի 28-ի իր նամակում, ուղղված ամերիկահայերին, գրում էր.

«Պատմությունը չեմ կարծեր, թե արձանագրած ըլլա այսպիսի կոտորածմը։ Լուրերը որքան ալ հասած ըլլան ձեզի, սակայն չեմ կարծեր թե որևէ գրիչ կամ բերան կարենա նկարագրել այն զարհուրելի նախճիրները, որոնք տեղի ունեցան վերջին 8—9 ամիսներուս մեջ Թուրքիո մեկ ծայրեն մինչև մյուս ծայրը, առանց խնայվելու ամենափոքր գյուղը կամ ղառամյալ ծերունին և կաթնկեր մանուկը։ Համիտյան ռեժիմին ատեն կամ անկե առաջ տեղի ունեցած կոտորածները հայկական ըլլան կամ հունական, պուլկարական ըլլան թե լիբանյան՝ չնչին բան մըն են ասոր քով։ Այս անգամ գործագրվածը իսկապես բնաջնջումի ծրագիր մըն է... Ժողովուրդը վտարվեցավ իր հայրենի օճախեն, լքելով ամեն ինչ և ճամբան կողոպտվեցավ և կոտորվեցավ։ Սամսոնեն սկսյալ մինչև Տիգրանակերտ գրեթե հայ այր մարդ չէ ազատված։ Երիտասարդ կիներն ու աղջիկները առևանգվեցան և մանուկները կոտորվեցան։ Կոտորածը ահռելի եղած է Մուշ, Բաղեշ, Տիգրանակերտ, Եդեսիա, Տրապիզոն, Շապին Գարահիսար, Քոր, Բալու և Երզնկա-Քեմախ, ուր գոնե ոչ մեկ հայ ազատված է, մանուկներն ու ծերերն անգամ չխնայվելով»[1]։

1916 թ., երբ դեռ շարունակվում էին հակահայկական խժդժությունները, ֆրանսիական նշանավոր հրապարակախոս Հանրի Բարբին այցելեց Արևմտյան Հայաստան, շրջագայեց նրա մի շարք գավառներում և կատարված արյունոտ դեպքերի ու ծիածող ավերակների թարմ տպավորության տակ գրի առավ ճանապարհորդական նոթեր, ուր նկարագրված են սարսափելի տեսարաններ։ Ընդհանրացնելով իր խոսքը, նա գրել է.

«Ով էլ այժմ անցնի ավերված Արևմտյան Հայաստանով, չի կարող չցնցվել, որովհետև արտասովոր շատ բան են ասում ավերակների ու մահվան այս անվերջ հեռաստանները։ Չկա ոչ մի ծառ, ոչ մի ժայռ, մամուռի ոչ մի կտոր, որը վկա չլինի մարդու սպանության, որը պղծված չլինի թափված արյան հեղեղներով։ Չկա ոչ մի գետ, կամ վտակ, որը դեպի հավիտենական մոռացություն տարած չլինի հարյուրավոր ու հազարավոր դիակներ։ Չկա ոչ մի անդունդ կամ կիրճ, որոնք չլինեն գերեզմաններ բաց երկնքի տակ, որոնց խորքերում չերևային կմախքների բաց կրծքավանդակները, քանի որ մաղդասպանները գրեթե ոչ մի տեղ չեն վատնել ոչ ջանք, ոչ ժամանակ, որպեսզի թաղեն իրենց զոհերին։ Այս ընդարձակ մարգերը, որոնցում մի ժամանակ ծաղկել են հայկական բնակավայրերը, այսօր ամայացած ու անմարդաբնակ են»[2]։

1913—1916 թթ. Ամերիկայի Միացյալ Նահանգների դեսպանի պաշտոնը Թուրքիայում զբաղեցնում էր Հենրի Մորգենթաուն։ Անմիջական կապեր հաստատելով երիտթուրքերի պարագլուխների, այդ թվում և Էնվեր փաշայի ու Թալեաթ բեյի հետ, նա լավ գիտեր թուրք ջարդարարների և՛ ծրագրերը, և՛ նրանց հրամանով իրականացվող բարբարոսությունները։ 1916—1917 թթ. գրի առած իր հուշերում դեսպանը, խոսելով հայկական կոտորածի մասին, գրել է.

---

1 ՀՍՍՀ ՊԿՊԱ., ֆ. 57, ց. 2, գ. 672, թ. 72։

2 Анри Барбп. В стране ужаса... Перевод с французского. Тифлис, 1919, с. 40.

«Ես համոզված եմ, որ մարդկության ամբողջ պատմության մեջ չկան այնպիսի զարհուրելի անցքեր, ինչպես այս կոտորածը։ Անցյալի մեծ ջարդերն ու հալածանքները հայ ժողովրդի 1915 թ. տառապանքների համեմատությամբ գրեթե աննշան են»[3]։

Նույն եզրակացությանը հանգեց նորվեգացի մեծ հումանիստ ու գիտնական Ֆրիտյոֆ Նանսենը, որը հանգամանորեն ուսումնասիրել էր տվյալ հարցին վերաբերող շատ նյութեր ու փաստաթղթեր։ Երիտթուրքերի գազանությունները հայերի նկատմամբ, գրել է նա, «իրենց ծավալով ու նողկալի դաժանությամբ գերազանցում են այն ամենը, ինչ որ հայտնի է պատմությանը... Թուրքական արյունոտ պատմությանը ավելացավ մի նոր դրվագ, որը ստվերի տակ գցեց այն բոլորը, ինչ կատարվել է անցյալում»[4]։ Այս ոգով են արտահայտվել նաև բազմաթիվ այլ նշանավոր գործիչներ։

Արևմտահայության ցեղասպանությանը նվիրված գրականության մեջ վաղուց արդեն իրավացիորեն նշված է այն հանգամանքը, որ հայկական կոտորածները իրականացվում էին հրեշավոր անգթությամբ։ Թուրքական կառավարությունը հրահանգում էր իր տեղական օրգաններին՝ լինել վճռական ու չխնայել անգամ ամենափոքր երեխաներին։ Ջարդարարները գործում էին ամենաբարբարոս միջոցներով։ Կորցնելով իրենց մարդկային կերպարանքը, նոանք գետերն էին թափում կամ բարձունքներից ցած նետում երեխաներին, սրախողխող անում կանանց, բռնաբարում և սպանում աղջիկներին։ Անգեն բնակչությանը այրում էին փակ շենքերում, խաղողյակների վրա, խեզդամահ ու շնչահեղձ անում ջրհորներում և քարանձավներում։ Հազարավոր մարդիկ ընկնում էին կացնի հարվածներից։ Անմեղ զոհերը ենթարկվում էին զազրելի տանջանքների ու խոշտանգումների։

Հենրի Մորգենթաուի հուշերում կան այսպիսի տողեր. «Մի անգամ ես զրույց ունեցա թուրք պատասխանատու և բարձրաստիճան պաշտոնյայի հետ, որն ինձ պատմեց, թե ինչ խոշտանգումներ են կիրառվում հայերի նկատմամբ։ Նա չթաքցրեց, որ կառավարությունը հավանություն է տալիս կիրառվող խոշտանգումներին... Այդ աստիճանավորն ասաց, որ խոշտանգումների այդ բոլոր մանրամասնությունները քննարկվել են «Միություն և առաջադիմություն» կոմիտեի շտաբկայանի գիշերային նիստում։ Ցավ պատճառող յուրաքանչյուր նոր միջոց գնահատվում էր որպես հիանալի հայտնագործություն, և աստիճանավորները շարունակ գլուխ են կոտրում մի նոր տանջանք հնարելու համար. Նա ինձ պատմեց, որ նրանք դիմել են նույնիսկ իսպանական ինկվիզիցիայի հաշվետվություններին... և ընդօրինակել են այն բոլորը, ինչ որ գտել են այնտեղ»[5]։

Թուրք վանդալները, ինչպես տեսնում ենք. որոշ իմաստով եղել են հիտլերյան ֆաշիստների նախորդները։

Հայության ցեղասպանության դեմ իր ձայնը բարձրացրեց շատ երկրների առաջավոր ու մարդասեր հասարակայնությունը։ Առանձնապես իրենց զայրույթն արտահայտեցին այնպիսի նշանավոր դեմքեր, ինչպիսիք են Մաքսիմ Գորկին, Վալերի Բրյուսովը, Սերգեյ Կիրովը Ռուսաստանում, Անատոլ Ֆրանսը, Ռոմեն Ռոլանը և Ժակ դե Մորգանը Ֆրանսիայում, Կարլ Լիբկնեխտը. Յոհանես Լեպսիուսը, Յոզեֆ Մարկվարտը և Արմին Վեգները Գերմանիայում, Ջեյմս Բրայսն ու Առնոլդ Թոյնբին Անգլիայում, Հերբերտ Ադամս Գիբբոնսը Ամերիկայում և ուրիշներ։

Ի՞նչ դիրք բռնեցին այսպես կոչված մեծ պետությունները։ Կայզերական Գերմանիան, որ առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Թուրքիայի դաշնակից-զինակիցն էր և ձգտում էր զավթել ամբողջ Մերձավոր Արևելքը, ամեն կերպ պաշտպանում և հովանավորում էր երիտթուրքերին։ Արևմտահա-

---

[3] Henry Morgenthau. Ambassador Morgenthau's Story. New York, 1918, p. 324.

[4] Fridtjof Nansen. L'Arménie et le Proche Orient. Paris, 1928, p. 357.

[5] Henry Morgenthau. Op. cit., p. 315.

յության ցեղասպանության ծրագիրը ընդունվեց ու իրագործվեց գերմանական իմպերիալիստների գիտությամբ ու համաձայնությամբ։ Գոյություն ունեն ոչ քիչ վկայություններ այն մասին, որ հայ բնակչության բռնագաղթի ու կոտորածի գործում մասնակցություն են ունեցել գերմանացի սպաներ։

Անտարբեր ու փարիսեցիական դիրք բռնեցին Անտանտի տերությունները, մասնավորապես Անգլիան ու Ֆրանսիան։ Ամերիկայի Միացյալ Նահանգները, որ 1915—1916 թթ. դեռևս չէին մասնակցում պատերազմին, նույնպես ոչ մի քայլ չկատարեցին օգնելու մղձավանջային օրեր ապրող հայ ժողովրդին։ Արևմտյան պետությունների այսօրինակ դիրքը Մաքսիմ Գորկին որակեց որպես «նողկալի անտարբերություն»։

Հարկ է նշել այն հանգամանքը, որ, երբ սկսվեցին մասսայական կոտորածները, հայ բնակչության մի մասը, չնայած խիստ անբարենպաստ պայմաններին, դիմեց ինքնապաշտպանական կռիվների և փորձեց այնտեղ, որտեղ այդ հնարավոր էր, զինված հակահարված տալ ջարդարարներին։ Զենքի դիմեց Վանի, Շապին-Գարահիսարի, Սասունի, Ուրֆայի, Անտիոքի և մի շարք այլ շրջանների բնակչությունը։

Առանձնապես հաջող անցավ Վանի բնակչության ինքնապաշտպանությունը։ 1915 թ. ապրիլի սկզբներին Վանի կուսակալ Ջևդեդ բեյը, կատարելով կառավարության հրահանգը, պատրաստություններ տեսավ հայկական կոտորածներ կազմակերպելու համար։ Իմանալով այդ մասին, Վասպուրականի հայությունը դիմեց նախազգուշական միջոցների։ Ապրիլի 7-ին թուրքական զորքերը հարձակում գործեցին քաղաքի վրա։ Բնակչության զինված ջոկատները ետ մղեցին հարձակումը։ Այդ օրվանից սկսվեցին Վանի ինքնապաշտպանական կռիվները։ Քաղաքը առնվեց օղակի մեջ։ Պաշարվածները որոշեցին կռվել մինչև վերջին հնարավորությունը։ Ինքնապաշտպանության էին դուրս եկել բոլորը՝ տղամարդիկ, կանայք, երեխաները։ Բոլորին համակել էր մի միտք՝ լավ է մեռնել, քան հանձնվել ջարդարարներին։ Զինված հայ բնակչությունը կռվում էր մեծ ոգևորությամբ և արիությամբ։ Այդ է պատճառը, որ թշնամու բոլոր գրոհներն ապարդյուն անցան, չնայած թուրքական զորքերը գերազանցում էին թե՛ քանակով և թե՛ ռազմական տեխնիկայով։ Վանը պաշտպանվեց հերոսաբար։ Ինքնապաշտպանական կռիվները տևեցին մինչև մայիսի 6-ը, երբ ռուսական զորքերը, որոնց կազմում թուրք ջարդարարների դեմ արիաբար կռվում էին հայ կամավորները, մտան Վան, իսկ Ջևդեդ բեյը փախուստի դիմեց[6]։ Այսպիսով, մոտ մեկ ամիս տևող հերոսական ինքնապաշտպանական մարտերի շնորհիվ Վանի բնակչությունն ազատվեց կոտորածներից և այնուհետև դաղթեց Կովկաս։

Վանի հերոսական գոյամարտը հայ ժողովրդի ազատագրական պայքարի փայլուն էջերից մեկն է։ Այս օրերին լրանում է նաև այդ փառապանծ էպոպեայի 70-ամյակը։

Հաջողությամբ վերջացավ նաև Շատախի ու Սվեդիայի (Անտիոքի) հայ բնակչության ինքնապաշտպանությունը։ Վերջինիս մասին ավստրիացի անվանի գրող Ֆրանց Վերֆելը գրեց «Մուսա լեռան 40 օրը» իր նշանավոր վեպը, որ լույս է տեսել աշխարհի բազմաթիվ լեզուներով։ Անհաջող ելք ունեցան, սակայն, Շապին-Գարահիսարի, Մուշի, Սասունի, Ուրֆայի և մի շարք այլ վայրերի բնակչության ինքնապաշտպանական ելույթները։

Չպետք է մոռանալ պատմական այն իրողությունը, որ երիտթուրքերի կառավարությունը փորձեց բնաջինջ անել նաև արևելահայությանը։ 1918 թ., երբ թուրքական զորքերին հաջողվեց ներխուժել Անդրկովկաս, հայության կոտորածներ տեղի ունեցան Արդահանում, Ախալքալակում, Կարսում, Ալեքսանդրապոլում, Լոռի-Փամբակում, Ադրբեջանի մի շարք գավառներում ու Բաքվում։ Հայց հերոսական այն մարտերը, որ վարեց հայ ժողովուրդը 1918 թ. մայիսին Սարդարապատում, Ղարաքիլիսայում և Բաշապարանում, ի չիք դարձրին թուրք ագրեսորների հայաջինջ ծրագիրը արևելահայության նկատմամբ։ 1918 թ. աշ-

---

6 Տե՛ս Օ. Մ ի ք ի թ ա ր յ ա ն. Վանի հերոսամարտը. Սոֆիա, 1930։ Ա. Ա. Կ ե ո ր կ ի ղ յ ա ն. Վասպուրականի հերոսամարտը. Պեյրութ, 1965։

նանը, երբ Գերմանիան ու Թուրքիան պարտություն կրեցին համաշխարհային պատերազմում, նրանց զորքերը դուրս վռնդվեցին Անդրկովկասից։

Սակայն բազմաչարչար հայ ժողովրդին դեռ վիճակվել էր ապրել նոր արհավիրքներ։ 1920 թ. աշնանը թուրքական զորքերը դարձյալ ներխուժեցին Արևելյան Հայաստան։ Նորից ջարդեր, կողոպուտ ու բռնություններ։ Նորից ֆիզիկական բնաջնջման ահավոր վտանգ։ Բայց օրհասական այդ օրերին, կործանման անդունդի եզրին կանգնած ժողովրդին իր եղբայրական օգնության հզոր ձեռքը մեկնեց Սովետական Ռուսաստանը, մեծ Հոկտեմբերի ծնունդ սովետական իշխանությունը, իշխանություն, որի մասին մեր մեծ բանաստեղծ Հովհ. Թումանյանն իրեն հատուկ իմաստությամբ և պատկերավոր ոճով գրել է. «Ահա մի իշխանություն, որի գերբի վրա տեսնում ենք ոչ թե զանազան գազաններ ու զենքեր, այլ մուրճ ու մանգաղ, բանվորի ու գյուղացու աշխատանքի սիմվոլը միատեղ ու միասին, մի իշխանություն, որ գալիս է, իր հետ բերելով հաշտ ու խաղաղ կյանք ու արդար աշխատանք, և ոչ թե կռիվ ու կոտորած»։

Ռուսական կարմիր զորամասերի օգնությամբ 1920 թ. նոյեմբերի 29-ին Հայաստանում հաստատվեց սովետական իշխանություն, տեղի ունեցավ պատմական մեծագույն մի ակտ, որի շնորհիվ ընդմիշտ վերջ դրվեցին բազմաչարչար հայ ժողովրդի դարավոր տառապանքներին։ Սկսվեց վերածնության, խաղաղ և ստեղծագործ աշխատանքի դարաշրջան։ Վեց տասնամյակից ավելի է արդեն, որ հզոր Սովետական Միության կազմում, եղբայրական մյուս ժողովուրդների հետ միասին հայ ժողովուրդը ապրում է քաղաքական ապահով կյանք, տնտեսական ու մշակութային վիթխարի առաջընթաց, պատմության տարեգրություններում թողնելով իր մղձավանջային անցյալը։

* * *

Արևմտահայության 1915 թ. ցեղասպանության՝ Մեծ եղեռնի մասին ստեղծված է հարուստ գրականություն։ Հրապարակված են բազմաթիվ ու բազմատեսակ նյութեր, այդ թվում՝ ջարդերից փրկված անհատների ցուցմունքներ, ականատեսների վկայություններ, բազմաթիվ երկրների դեսպանությունների ստացված պաշտոնական զեկուցագրեր։ Լույս են տեսել հարյուրավոր ու հազարավոր թղթակցություններ ու հոդվածներ, գրքեր, գրքույկներ, հուշագրություններ, փաստաթղթերի ժողովածուներ, գիտական ուսումնասիրություններ և այլ աշխատություններ։ Գրել են տարբեր երկրներում, տարբեր լեզուներով, գրել են գիտնական պատմաբաններ, նշանավոր գրողներ, հրապարակախոսներ, լրագրողներ, պետական բարձր պաշտոններ վարող պատասխանատու անձնավորություններ և այլք։ Հրապարակումների հոսքը շարունակվում է նաև այսօր։ Եվ այդ բազմաժանր ու բազմաբովանդակ գրականությունը, իհարկե, ոչ մի կասկած չի թողնում այն մասին, որ Օսմանյան կայսրության մեջ 1915—1916 թթ. իսկապես տեղի են ունեցել արևմտահայերի մասսայական կոտորածներ, ցեղասպանություն՝ ամենայն դաժանությամբ ու բարբարոսությամբ։

Զարմանալի է, սակայն, որ ժամանակակից թուրք պատմաբանները, և ոչ միայն նրանք, իրենց պաշտպանության տակ են առնում ջարդարար երիտթուրքերին և ձգտում են ժխտել արևմտահայության ցեղասպանության փաստը։ Այս տենդենցը ուժեղացել է հատկապես վերջին տարիներին։ Թուրքական ռեակցիոն շրջանները, ելնելով քաղաքական նկատառումներից, հրապարակում են բազմաթիվ գրքեր ու հոդվածներ, հանդես են գալիս ռադիոյով ու հեռուստատեսությամբ, կազմակերպում են հարցազրույցներ ու «գիտական» սիմպոզիումներ և այլն, որպեսզի ծուռ հայելու մեջ ներկայացնեն պատմական անցյալը։ Խիստ բնորոշ է այդ տեսակետից հետևյալ օրինակը. անցյալ հոկտեմբեր ամսին, Էրզրում քաղաքի Աթաթուրքի անվան համալսարանում կայացել է «գիտական սիմպոզիում»՝ նվիրված հայ-թուրքական հարաբերությունների պատմությանը և մասնավորապես Հայկական հարցին ու հայկական կոտորածների խնդրին։ Չորս օր տևող այդ կոնֆերանսում հանդես են եկել համալսարանի դեկավարները, պրոֆեսորները, այլ և այլ դասախոսներ, նախկին դիվանագետներ և զինվորականներ, պետական պաշտոնյաներ, այդ թվում՝ նահանգապետը և

ուրիշներ։ Ի դեպ, հատուկ հանձնարարությամբ ելույթ է ունեցել նաև բավական կասկածելի մի հայ անձնավորություն Ասլանյան ազգանունով։

Գիտության քողի տակ հանդես եկող, բայց գիտության հետ ոչ մի առնչություն չունեցող այդ մարդկանց հանձնարարված է հիմնավորել կանխամտածված այն թեզը, որ, իբր, հայերը Օսմանյան կայսրության մեջ ունեցել են բարեկեցիկ կյանք, որ Թուրքիայում երբեք չեն եղել հայության կոտորածներ, ընդհակառակը, հաճախ հայերն են հարստահարել և կոտորել թուրքերին։

Ինչպես տեսնում ենք, սուտը լպիրշ է և ապշեցուցիչ։ Պատմության ժամանակակից կեղծարարները իսպառ անտեսում են փաստերը, սկզբնաղբյուրները, գիտական ուսումնասիրությունները և բազմաթիվ այլ հրատարակություններ, հայտարարելով, թե դրանք ստեղծված են հայասեր պացիֆիստների կողմից։

Սակայն թուրք ռեակցիոն հեղինակները գիտակցաբար «մոռանում են», որ արխիվներում ու մի շարք հրատարակություններում պահպանվել են նաև սկզբնաղբյուրներ, որոնք ունեն ոչ թե հայասիրական, այլ բացահայտ թուրքոֆիլական բնույթ, բայց չնայած այդ հանգամանքին, դրանք ևս, այնուամենայնիվ, հաստատում են արևմտահայության ցեղասպանության փաստը։ Այս աղբյուրների վկայություններն արդեն չեն կարող հերքել ամենամոլի կեղծարարներն անգամ։

Ի՞նչ աղբյուրների մասին է խոսքը։ Ես նկատի ունեմ գերմանական և թուրքական սկզբնաղբյուրները։

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին, ինչպես գիտենք, Թուրքիան և Գերմանիան դաշնակիցներ ու զինակիցներ էին։ Թուրքական կառավարության գրեթե բոլոր կարևոր ծրագրերը, այդ թվում արևմտահայերի բռնագաղթի և կոտորածների ծրագիրը, կազմվում ու իրագործվում էին կայզերական Գերմանիայի գիտությամբ ու համաձայնությամբ։ Թուրքիայում գործող գերմանական բարձրաստիճան պաշտոնյաները՝ դեսպանները, հյուպատոսները, զինվորական ներկայացուցիչները և այլն, լավ տեղյակ էին այնտեղ կատարվող անցքերին և իրենց գաղտնի պաշտոնական զեկուցագրերում, ուղղված գերմանական ռայխսկանցլերին և մյուս ղեկավար գործիչներին, հայտնել են կարևոր տեղեկություններ հայկական ջարդերի մասին։ Բերենք մի քանի օրինակներ։

1912—1915 թթ. կայզերական Գերմանիայի Կ. Պոլսի դեսպանն էր գերմանական իմպերիալիզմի աչքի ընկնող ներկայացուցչիներից մեկը, համոզված թուրքոֆիլ բարոն Ֆոն Վանգենհայմը։ Ունենալով քաղաքական շահերի և գործելակերպի ընդհանրություն, նա սերտ, բարեկամական կապեր հաստատեց երիտթուրքական կուսակցության շատ ղեկավար գործիչների և մասնավորապես Էնվեր փաշայի ու Թալեաթ բեյի հետ, ունեցավ մեծ ազդեցություն թուրքական կառավարության վրա և լավատեղյակ էր երկրում կատարվող քիչ թե շատ կարևոր անցքերին։ Եվ ահա ըստ ամենայնի խիստ ազդեցիկ ու լավատեղյակ, երիտթուրքերին սմեն կերպ հովանավորող այս դեսպանը Գերմանիայի կանցլեր Բետման Հոլվեգին ուղղված 1915 թ. հունիսի 17-ի թվակիր իր զաղտնի զեկուցագրում հաղորդում էր.

«Միանգամայն ակնհայտ է, որ հայերին աքսորելը կապված չէ միայն ռազմական նկատառումների հետ։ Վերջերս ներքին գործերի մինիստր Թալեաթ բեյը առանց քաշվելու հայտարարել է կայզերական (գերմանական—Մ. Ն.) դեսպանության աշխատակից դոկտոր Մորգմանին, որ «Բարձրագույն դուռը ձգտում է օգտագործել համաշխարհային պատերազմը, որպեսզի վերջնական դատաստան տեսնի իր ներքին թշնամիների (տեղական քրիստոնյաների) հետ, առանց հարուցելու դիվանագիտական միջամտություն արտասահմանից» (այստեղ և հետագա բոլոր ընդգծումները մերն են— Մ. Ն.)։

Գերմանական դեսպանի զեկուցագրի այս քաղվածքը շատ կարևոր է այն տեսակետից, որ նրանում բառացիորեն բերված են հայ ժողովրդի ամենամեծ

[7] Deutschland und Armenin 1914—1918. Sammlung diplomatischer Aktenstücke. Herausgegeben und eingeleitet von dr. Johannes Lepsius. Potsdam, 1919, S. 84.

դահիճ Թալեաթ բեյի խոսքերը թուրքական կառավարության բարբարոսական ծրագրի մասին։ Վկայությունը պերճախոս է և անհերքելի։

Քիչ ավելի ուշ, 1915 թ. հուլիսի 7-ին, նույն դեսպանը գրում էր կանցլերին, որ, եթե մինչև վերջերս հայ բնակչության բռնագաղթը կատարվում էր այն նահանգներից, որոնք մոտ էին պատերազմական գործողությունների արևելյան ճակատին և Ագանայի նահանգի մի քանի շրջաններից, ապա այժմ թուրքական կառավարությունը հայերին աքսորում է նաև Տրապիզոնի, Խարբերդի և Սեբաստիայի գավառներից, որոնց չի սպառնում թշնամական որևէ ներխուժում։ Գերմանական դեսպանի զեկուցագիրը վերջանում էր հետևյալ շատ նշանակալից տողերով.

«Այդ գործողությունները (հայերի բռնագաղթը— Մ. Ն.) և այն ձևերը, որոնց միջոցով կատարվում են դրանք, վկայում են այն մասին, որ կառավարությունը իրոք նպատակ ունի ոչնչացնել հայ ցեղը թուրքական պետության մեջ»[8]։

Ինչպես տեսնում ենք, ասված է ամեն ինչ, ասված է հստակ և անվերապահ։ Իհարկե, այս վկայությունը ևս չի հարուցում ոչ մի կասկած, քանի որ թուրքոֆիլ բարոն Վանգենհայմը չէր կարող առանց հիմքի և փաստերի ո՛չ ամբաստանել իր թուրք բարեկամներին և ո՛չ էլ սխալ տեղեկություններ հաղորդել իր պետության ղեկավարներին, որոնք ամենասերտ կապեր ունեին թուրքական կառավարության հետ։

Բայց բերենք այլ փաստեր։ Դեսպան Վանգենհայմին ժամանակավորապես փոխարինող կոմս Հոհենլոհե-Լանգենբուրգը 1915 թ. սեպտեմբերի 4-ին գրում էր ռայխսկանցլերին, որ մի քանի օր առաջ (օգոստոսի 31-ին) դեսպանությունն Եկավ Թուրքիայի ներքին գործերի մինիստր Թալեաթ բեյը և «իմ ներկայությամբ բույլ տվեց մի այսպիսի արտահայտություն. «Հայկական հարցն այլևս գոյություն չունի»[9]։ Ուրեմն, հայ ժողովրդի դաժան ու նենգ թշնամին այցելել է զինակից պետության դեսպանությունն և ամբարտավան ինքնագոհությամբ ու անասելի ցինիկությամբ հայտարարել, որ երիտթուրքերի կուսակցության արյունոտ ծրագիրը, այսինքն արևմտահայության ցեղասպանությունն արդեն իրագործվել է և հետևապես Հայկական հարցն այլևս գոյություն չունի։ Ահա և հրեշավոր ճիվաղի խոստովանությունը։

1915 թ. նոյեմբեր ամսին Կ. Պոլսի գերմանական դեսպան նշանակվեց կոմս Վոլֆ Մետերնիխը, որի գաղտնի զեկուցագրերը ևս պարունակում են կարևոր տեղեկություններ Մեծ եղեռնի մասին։ Այսպես օրինակ, ռայխսկանցլեր Բետման Հոլվեգին ուղղված 1916 թ. հունիսի 30-ի թվակիր իր գրության մեջ նա, խոսելով երիտասարդ թուրքերի կուսակցության կենտրոնական կոմիտեի մասին, հայտնում էր.

«Կոմիտեն պահանջում է բնաջինջ անել հայերի վերջին մնացորդները»[10]։

Բնաջինջ անել վերջին մնացորդները... Այս զարհուրելի պահանջը ներկայացվում էր գլխավորապես տեղական իշխանություններին։ Ոճրագործ քաղաքականության ինչպիսի՜ հետևողականություն։

1916 թ. հունիսին, իսկապես, խոսք կարող էր լինել միայն վերջին մնացորդների մասին, որովհետև մինչ այդ հայերի ցեղասպանությունը հիմնականում արդեն իրագործվել էր։ Այդ, ինչպես տեսնում ենք, ընդունում էին ինչպես իրենք՝ երիտթուրքերը, այնպես էլ նրանց դաշնակից պետության դեսպանը։

Մետերնիխը երիտթուրքերի կոմիտեի անդամներին որակում էր որպես մոլի ֆանատիկոսներ և «քաղցած գայլեր», որոնք չտեսնված ագահությամբ հափշտակում են զոհերի կայքն ու գույքը, ամբողջ ունեցվածքը։ Նկատենք, որ նոր դեսպանը միաժամանակ գրում էր, որ երիտթուրքերի ոճմակը անհամբեր սպասում է հարմար առիթի, որպեսզի հույների հետ ևս վարվի այնպես, ինչպես վարվեցին հայերի հետ։

8 Նույն տեղում, էջ 94։

9 Նույն տեղում, էջ 146—147. Թալեաթն արտահայտվել է ֆրանսերենով։

10 Նույն տեղում, էջ 277։

1916 թ. հուլիսի 10-ին գրած իր զեկուցագրում կոմս Մեռերնիխը նորից հիշեցնում էր այն հանգամանքը, որ Թուրք կառավարիչների հիմնական ծրագիրն է եղել «վերջ տալ Հայկական հարցին հայ ցեղը ոչնչացնելու միջոցով» և որ այդ վանդալական ծրագիրը նրանք իրագործել են ամենայն դաժանությամբ ու համառությամբ, բոլորովին անտեսելով միջազգային հասարակական կարծիքը և օտարերկրյա մի շարք դեսպանների դիմումները[11]։

Հայկական կոտորածների փաստը ընդունել է նաև այնպիսի մի բարձրաստիճան պաշտոնյա, ինչպիսին էր Գերմանիայի զինվորական ներկայացուցիչը Թուրքիայում՝ գեներալ Լիման ֆոն Սանդերսը, որի ձեռքում էր գտնվում փաստորեն Թուրքական բանակի ղեկավարությունը պատերազմի տարիներին։ Հանդես գալով որպես վկա Թալեաթ փաշայի սպանության առիթով 1921 թ. հունիսին Բեռլինում տեղի ունեցող դատական պրոցեսում, նա չժխտեց Յոհաննես Լեպսիուսի ցուցմունքները հայերի ջարդերի մասին, միայն թե աշխատեց կատարված մեղքի զգալի մասը գցել ցածր պաշտոնեության և քրդերի վրա[12]։

Հայկական կոտորածների վերաբերյալ կարևոր և ստույգ տեղեկություններ են հաղորդել նաև Թուրքիայում այն ժամանակ պաշտոնավարող գերմանական հյուպատոսները, որոնք ի պաշտոնե գործելով գավառներում, ավելի մոտ էին կանգնած կատարվող անցքերին և հաճախ լինելով շատ ոճրագործությունների ականատեսներ, հաղորդում էին զարհուրելի մանրամասնություններ և ճշգրիտ տվյալներ։

Այսպես, դեռևս 1915 թ. մայիսի 10-ին Հալեպի հյուպատոս Ռյոսլերը հայտնում էր Կ. Պոլսի գերմանական դեսպանությանը կոնկրետ փաստեր Ադանայում, Զեյթունում և Հարևան մի շարք շրջաններում Թուրքական իշխանությունների կողմից գործադրվող հակահայկական միջոցառումների մասին։ Հյուպատոսը եկել էր այն եզրակացության, որ երիտթուրքերի կառավարությունը նպատակ ունի ոչնչացնել այդ գավառների ամբողջ բնակչությունը։

1915 թ. հունիսի 2-ին Էրզրումի գերմանական հյուպատոս Շոյբներ Ռիխտերը նույն դեսպանին հեռագրում էր. «Իմ բանակցությունները բանակի (խոսքը Թուրքական 3-րդ բանակի մասին է— Մ. Ն.) գլխավոր հրամանատարի հետ հայերի արտաքսման մասին չունեցան դրական հետևանքներ։ Հայ բնակչությունը բոլոր դաշտավայրերից և ըստ երևույթին նաև Էրզրումից պետք է աքսորվի Դեյր-էլ-Զորի ուղղությամբ։ Այս մեծ մասշտաբի դեպորտացիան հավասարազոր է մասսայական կոտորածների... Ռազմական բնույթի պատճառաբանություններն անհիմն են, որովհետև տեղական բնակչության ապստամբություններ բացառված է, բանի որ ամբոխվածները ծերունիներ, կանայք և երեխաներ են... Հայկական լքված, բնակազուրկ այն գյուղերը, որոնք ես այցելեցի, թալանված են։ Կողոպտված է նաև Ղրզրլ-վանքը, որի եկեղեցին ավերված է»[13]։

Հյուպատոսը ճիշտ էր նկատում, և այդ դեռ այն ժամանակ պարզ էր շատերի համար, որ հայերի դեպորտացիա կոչվածը ոչ այլ ինչ է, եթե ոչ մասսայական կոտորածներ, և որ դեպորտացիան հիմնավորելու համար Թուրքական կառավարության կողմից առաջ քաշված «ռազմական նկատառումները» բացահայտ պատրվակ էին ու միանգամայն կեղծ։

Նույն հյուպատոսը 1915 թ. հուլիսի 8-ին հեռագրում էր դեսպան Վանգենհայմին, որ Բայբուրդում, Երզնկայում և Դերջանում վերսկսել են հայերի կոտորածները երիտթուրքական կոմիտեի և տեղական իշխանությունների ցուցումներով ու հրահրումով։

Այնուհետև Շոյբներ Ռիխտերը հուլիսի 28-ին գրում էր, թե Էրզրումի վալի Թահսին բեյի հետևորդները «բացեիբաց խոստովանում են, որ իրենց գործունեության վերջնական նպատակն է հայերի լրիվ ոչնչացումը Թուրքիայում։ Պատերազմից հետո «մեզ մոտ Թուրքիայում հայեր այլևս չեն լինի»,— բառա-

---

11 Նույն տեղում, էջ 280։

12 Դատավարություն Թալեաթ փաշայի։ Սղագրական զեկուցում. Վիեննա, 1921, էջ 97—99։ Տե՛ս նաև Der Prozess Talaat Pascha, Berlin, 1921.

13 Deutschland und Armenien..., S. 80.

ցիորեն այսպես արտահայտվեց մի հեղինակավոր անձնավորություն։ Քանի որ այդ նպատակին դժվար է հասնել ջարդեր կազմակերպելու միջոցով, այստեղ հույս ունեն, թե ամեն ինչ կլրացնեն այն զրկանքները, որ կրելու են Միջագետք աքսորվածները (այսինքն հայերը—Մ. Ն.) երկարատև ճանապարհորդության ժամանակ և ապա անսովոր կլիման։ Հայկական հարցի այսպիսի «լուծումը» իդեալական է թվում ծայրահեղ ուղղության կողմնակիցներին, որոնց թվին են պատկանում գրեթե բոլոր զինվորականները և կառավարական չինովնիկները։ Թուրք ժողովուրդը ոչ մի դեպքում համաձայն չէ Հայկական հարցի այսպիսի լուծման հետ»[14]։

Սամսունի գերմանական փոխհյուպատոս Կուքոֆը 1915 թ. հուլիսի 4-ին զեկուցում էր իր դեսպանին, որ Անատոլիայի վիլայեթներում տեղի ունեցող բռնագաղթեցումը՝ դեպորտացիան նպատակ ունի ոչնչացնել կամ մահմեդականացնել ամբողջ հայ ժողովուրդը։

Այն նույն օրերին՝ հուլիսի 9-ին Տրապիզոնի գերմանական հյուպատոս դոկտոր Բերգֆելդը ռայխսկանցլեր Բեթման Հոլվեգին հաղորդում էր հայ բնակչության ենթահանությունների ու դաժան բռնությունների մասին։ Հյուպատոսն առանձնապես նշում էր, որ իթթիհատականների կուսակցության «կենտրոնական կոմիտեն նպատակ ունի այդ միջոցներով հիմնովին վերջ տալ Հայկական հարցին»[15]։

Էրզրումի վիլայեթի հայ բնակչության աքսորի, թուրքական կառավարության կողմից հայերի նկատմամբ կիրառվող հալածանքների ու բռնությունների մասին բավական մանրամասն տեղեկություններ է հայտնել գերմանացի փոխգնդապետ Շտանդեն, 1915 թ. օգոստոսի 23-ի թվակիր իր զեկուցագրում՝ ուղղված Կ. Պոլսի գերմանական զինվորական միսիային։ Որպես ականատես կատարվող անցքերի՝ նա, բերելով կարևոր փաստեր հակահայկական խժդժությունների մասին, ի վերջո գրում էր. «Հայերի աքսորման ու ոչնչացման մասին որոշումը ընդունվել է երիտթուրքերի կոմիտեի կողմից Կ. Պոլսում։ Նրա կողմից էլ, հավանաբար, կազմակերպվել ու իրականացվել է այդ որոշումը ռազմական իշխանությունների ու զանազան հոսսակների օգնությամբ։ Այդ նպատակով էլ բացի տեղական (Էրզրումի— Մ. Ն.) ադմինիստրացիայի ոստիկանության պետ Խուլուսի բեյից և զորքերի գլխավոր հրամանատար Մահմուդ Քյամիլ փաշայից, տեղերում եղել են կոմիտեի անդամներ Հիլմի բեյը, Շաքիր բեյը, Սեյֆուլլա բեյը»[16]։

Կարելի է բերել նման բազմաթիվ այլ վկայություններ, սակայն սահմանափակվենք այսքանով։ Նշենք միայն, որ թուրքական կառավարության բարբարոսությունների վերաբերյալ սարսափ ազդող տեղեկություններ են հայտնել նաև, այսպես ասած, շարքային գերմանացիները՝ առևտրականներ, ինժեներներ, ուսուցիչներ, բժիշկներ ու գիտության քարոզներ և այլն, որոնք 1915—1916 թթ. գտնվելով Թուրքիայում, ականատես են եղել հայկական ջարդերին[17]։

Հայերի ցեղասպանության մասին դեռ իր ժամանակին գրել են գերմանացի այնպիսի հումանիստ, առաջավոր գործիչներ, ինչպիսիք են Յոհաննես Լեպսիուսը, Յոզեֆ Մարկվարտը, Առմին Վեգներ և ուրիշներ։ Եվ վերջապես չմոռանանք, որ թուրք բարբարոսների և նրանց հովանավորող գերմանական իմպերիալիզմի դեմ իր բողոքի ձայնը բարձրացրեց գերմանական բանվորական հեղափոխական շարժման ականավոր գործիչ Կարլ Լիբկնեխտը։ Լինելով ռայխստագի դեպուտատ, նա 1916 թ. հունվարի 14-ին խիզախ հարցապնդում արեց ռայխսկանցլերին հայկական կոտորածների մասին, իսկ քիչ ավելի ուշ գրեց հետևյալ տողերը. «Թուրական կառավարությունը կազմակերպել է հայկական զարհուրելի կոտորած։ Ողջ աշխարհը գիտի այդ մասին և ողջ աշխար-

14 Նույն տեղում, էջ 113։

15 Նույն տեղում, էջ 101։

16 Նույն տեղում, էջ 142։

17 Տե՛ս Геноцид армян в Османской империи. Сборник документов и материалов, под редакцией М. Г. Нерсисяна. Ереван, 1983, с. 313, 318, 324.

հր դրա պատասխանատուն է համարում Գերմանիային, չէ՞ որ թուրքական կառավարությունը ղեկավարում են Կ. Պոլսում գտնվող գերմանական սպաները։ Ոչինչ չկիտեն միայն Գերմանիայում, որովհետև գերմանական մամուլի բերանին փականք է դրված»[18]։

Այժմ մի քանի վկայություններ թուրքական սկզբնաղբյուրներից։ Դեռևս 1919—1920 թթ. հայտնաբերվեցին ու հրապարակվեցին թուրքական կառավարության ներքին գործոց մինիստր, գլխավոր դահիճ Թալեաթ բեյի մի շարք գաղտնի հեռագրերն ու հրամանները տեղական իշխանություններին հայերին բնաջնջելու մասին։ Այսպես. ծածկագիր հեռագրերից մեկում, որ ուղղված է Հալեպի նահանգապետին, կարդում ենք. «Որոշված է Թուրքիայում բնակվող հայերին ոչնչացնել ամբողջությամբ։ Նրանք, ովքեր դեմ են այս որոշմանը, չեն կարող մնալ իրենց վարչական պաստերում։ Ինչքան էլ դաժան լինեն միջոցառումները, միևնույն է, պետք է վերջ տրվի հայերի գոյությանը։ Ոչ մի ուշադրություն մի դարձրեք ո՛չ հասակին, ո՛չ սեռին և ո՛չ էլ խղճի խայթին»[19]։

Թալեաթի մի հրամանում, ուղղված նույն նահանգապետին, կա՛ն այսպիսի տողեր.

«Ջնայած հայկական տարրի ոչնչացման հարցը վաղուց էր որոշված, բայց հանդամանքները թույլ չէին տալիս իրականացնելու այդ սրբազան գործը։ Այժմ, երբ խոչընդոտները վերացված են, հասել է ժամանակը ազատել մեր հայրենիքն այդ վտանգավոր տարրից։ Խստորեն հանձնարարվում է չենթարկվել խղճահարության զգացումին, այլ վերջ տալ բոլորին և ամեն կերպ աշխատել ոչնչացնել «Հայաստան» անունը Թուրքիայում»[20]։

Կասարվող անցքերին լավատեղյակ Նայիմ բեյը, որ Հալեպ քաղաքում անմիջականորեն զբաղվում էր հայերին Միջագետք աքսորելու գործով և ականատես էր անասելի բարբարոսություններին, իր հուշերում գրել է հետևյալը.

«Ես կարծում եմ, որ հայերի աքսորի ու ջարդերի պատմությունը իրեն հավասարազորը չունի անմարդկային արարքների մասին մինչև օրս գրված տարեգրությունների մեջ։ Թուրքիայի լայնարձակ տարածքի որ անկյունն էլ հայացք ձգել, ինչպիսի խոր կիրճ էլ նայել՝ ամենուրեք կարելի է գտնել ամենադաժան ձևով մորթված ու այլանդակված հայերի հազարավոր դիակներ ու կմախքներ»[21]։

Օսմանյան կայսրության այդ ժամանակաշրջանի գործիչներից մեկը, ծագումով քուրդ Մեվլան Զադե Ռիֆատը, գրել է հուշեր, ուր, ի միջի այլոց, նկարագրում է այն գաղտնի նիստը, որտեղ ընդունվել է որոշում հայերին ոչնչացնելու մասին։ Երիտթուրքերի պարագլուխներից մեկը՝ դոկտոր Նազիմը, այդ նիստում հանդես է եկել հետևյալ թեզով. «Հայ ժողովուրդը պետք է ոչնչացնել հիմնովին, որպեսզի ոչ մի հայ չմնա մեր հողի վրա և մոռացվի այդ անունն իսկ։ Այժմ պատերազմ է, այսպիսի համար առիթ այլևս չի լինի։ Մեծ տերությունների միջամտությունը և համաշխարհային մամուլի աղմկոտ բողոքները կմնան աննկատ, կամ թե նրանք կկանգնեն կատարված փաստի առաջ և դրանով էլ կփակվի հարցը։ Այս անգամ մեր գործողությունները պետք է կրեն համընդհանուր բնույթ։ Անհրաժեշտ է ոչնչացնել բոլորին անխտիր»[22]։

Նիստին ներկա գտնվող էնվերը, Թալեաթը, Բեհաէդդին։ Շաքիրը և մյուսները լրիվ համաձայնվում են Նազիմի հետ և, ինչպես գրում է Մեվլան Զադեն, «միաձայն քվեարկեցին, որպեսզի ամբողջովին ոչնչացվի հայ ժողովուրդը, առանց որևէ բացառության»։

Երիտթուրքերի անփառունակ իշխանության տապալումից հետո, միջազգային հասարակական կարծիքի ճնշման տակ, Թուրքիայի նոր կառավարության որոշման համաձայն Կ. Պոլսում, 1919 թ. տեղի ունեցան դատական պրո-

---

18 Карл Либкнехт. Избранные речи, письма и статьи. М., 1961, с. 334.

19 The Memoirs of Naim Bey..., London, 1920, p. 64.

20 Նույն տեղում։

21 Նույն տեղում, էջ 20։

22 Геноцид армян в Османской империи..., с. 409.

ցեսներ, ուր մի շարք մեղադրանքներով, այդ թվում նաև հայկական ջարդեր կազմակերպելու մեղադրանքով, դատվեցին երիտթուրքերի կուսակցության շատ գործիչներ։ Թուրքական ռազմական այդ տրիբունալները, որոնք վարում էին թուրք գեներալները, բազմաթիվ փաստերի ու տվյալների հիման վրա միանգամայն ապացուցված համարելով արևմտահայության բարբարոսական կոտորածների փաստը, մահվան դատապարտեցին արյունարբու դահիճներ Թալեաթին, Էնվերին, Ջեմալին, դոկտոր Նազիմին, Բեհաէդդին Շաքիրին և այլոց. Բնորոշ է, որ Կ. Պոլսի ռազմական տրիբունալի մեղադրական ակտում կան այսպիսի տողեր.

«Սկսված հետաքննության գլխավոր հետևությունն այն է, որ այն հանցագործությունները, որ տեղի ունեցան հայերին տարբեր տեղեր և տարբեր ժամանակ աքսորելու շրջանում, մեկուսացած ու լոկալ գործողություններ չէին։ Դրանք մտածված էին նախօրոք և իրականացվեցին կենտրոնական օրգանի կարգադրությամբ՝ գաղտնի հրամանների կամ բանավոր հրահանգների միջոցով»[23]։

Մեղադրական մի այլ ակտում ասված է, որ երիտթուրքերի կառավարության որոշման հիման վրա երկրի հեռավոր ծայրամասերը գաղթեցվող հայերի քարավանները «ոչնչացվել են ճանապարհներին իրենց իսկ՝ երիտթուրքերի ստեղծած հրոսակների կողմից», որոնք կազմված էին բանտերից դուրս բերված ոճրագործներից ու քոչական տարրերից։

Ռազմական տրիբունալների դատավարության ընթացքում հանդես եկան մի շարք թուրք բարձրաստիճան պաշտոնյաներ, որոնք հաղորդեցին կարևոր վկայություններ։ Այսպես օրինակ, արևելյան ռազմաճակատում գործող թուրքական բանակներից մեկի նախկին հրամանատար Վեհիբ փաշան այն դատարանում, ուր քննվում էին Խարբերդում կատարված դեպքերը, հայտարարել է, որ «հայերի ջարդերը և ոչնչացումը, ինչպես նաև նրանց ունեցվածքի կողոպուտը ու գրավումը «Միություն և առաջադիմություն» կոմիտեի (այսինքն երիտթուրքերի— Մ. Ն.) նախօրոք մտածված նպատակն է եղել»[24]։

Վերջապես մի կարևոր վկայություն ևս։ Հայկական զանգվածային կոտորածների փաստն ընդունել է նաև Մուստաֆա Քեմալ փաշան, քաղաքական մի գործիչ, որն, ինչպես հայտնի է, ամենամեծ հեղինակությունն է ժամանակակից Թուրքիայում։ 1926 թ. հունիսին շվեյցարական լրագրող Էմիլ Հիլդերբրանդի հետ ունեցած հարցազրույցի ժամանակ նա ասել է, թե երիտասարդ թուրքերի միության կոմիտեն կազմված էր «քաղաքական բախտախնդիրներից, կիսագրագետ առաջադիմականներից և սանձարձակ սովորույթների տեր մարդկանցից»։ Այնուհետև, ակնարկելով 1915 թ. հայկական կոտորածները, Մուստաֆա Քեմալը նշել է, որ երիտթուրքերի կուսակցությունը «պետք է պատասխան տար մեր միլիոնավոր քրիստոնյա հպատակների կյանքի համար, որոնք անգթորեն, զանգվածաբար քշվեցին իրենց բնակավայրերից և ոչնչացվեցին»[25]։ Չի կարելի չհամաձայնվել այս եզրակացության հետ։

Այսպիսով, անհերքելի վավերագրերը և բազմաթիվ ճշգրիտ վկայությունները, որոնցից միայն մի փոքր մասը հիշատակեցինք այստեղ, ամբողջությամբ հաստատում են պատմական այն իրողությունը, որ 1915 թ. երիտթուրքերը հրեշավոր դաժանությամբ իրագործեցին արևմտահայության ցեղասպանությունը, որը դառձավ հայ ժողովրդի դարավոր պատմության ամենամռայլ և ողբերգական դրվագը։ Եվ այսօր, պատմության ժամանակակից թուրք կեղծարարները և նրանց կողմից վարձված մի քանի հեղինակներ Ամերիկայում և Անգլիայում, ինչքան էլ ցանկանան նենգափոխել փաստերը, միևնույն է չեն կարող թաքցնել պատմական ճշմարտությունը և թյուրիմացության մեջ գցել միջազգային հասարակական կարծիքը։

Մեծ եղեռնից հետո անցել է յոթ տասնամյակ։ Մեր ժողովուրդը, որի ծխա-

23 Նույն տեղում, էջ 559։

24 Նույն տեղում, էջ 573։

25 «Պատմա-բանասիրական հանդես», 1984, № 3, էջ 237—238 (տե՛ս Ռ. Սահակյանի աղորդումը)։

ցող վիշտը երբեք չի մառել, սոբությամբ է պահպանում մեկ ու կես միլիոն անմեղ նահատակների հիշատակը։ Վերածնված սովետահայ ժողովուրդը, աշխարհով մեկ ցրված սփյուռքահայությունը այսօր էլ, մեծ ողբերգության 70-ամյակի տարելիցին, նորից է արտահայտում իր անհուն վիշտն ու զայրույթը և անարգանքի սյունին գամում արյունոտ դահիճներին, բոլոր այն սև ուժերին, որոնք կազմակերպել ու կազմակերպում են ժողովուրդների ցեղասպանություն ինչպես անցյալում, այնպես էլ մեր ժամանակներում։ Սովետական Միությունը, նրա բոլոր ժողովուրդները, ամբողջ աշխարհի առաջավոր մարդկության հետ միասին, այսօր հետևողականորեն պայքար են մղում խաղաղության համար, այն բանի համար, որպեսզի այլևս չլինեն պատերազմներ, կոտորածներ ու ցեղասպանություն ոչ մի երկրում և ոչ մի ժամանակ։

ГЕНОЦИД ЗАПАДНЫХ АРМЯН В 1915 ГОДУ

(К 70-летию великой трагедии)

Академик АН АрмССР *М. Г. НЕРСИСЯН*

Резюме

В 1915 г. в Османской империи совершилось чудовищное злодеяние. Шовинистическая партия младотурков, в руках которой находилось правительство Турции, варварски истребила полтора миллиона армян и опустошила всю Западную Армению. Посол США в Константинополе Генри Моргентау, располагавший точными сведениями о массовой резне армян и неоднократно встречавшийся с главарями младотурков Энвер-пашой и Талаат-беем, в своих воспоминаниях писал: «Я уверен, что во всей истории человечества нет стольких ужасающих фактов, как эта резня. Великие избиения и гонения, наблюдавшиеся в прошлом, кажутся почти незначительными по сравнению со страданиями армянской нации в 1915 г.»

В путевых записках известного французского публициста Анри Барби, посетившего в 1916 г. Западную Армению, читаем: «Кто ни проезжает сейчас по опустошенной Армении, не может не содрогаться, так необычайно много говорят эти бесконечные дали развалин и смерти. Нет ни одного дерева, ни одного утеса, ни одного клочка мха, который не был бы свидетелем избиений человека, который не был бы осквернен потоками пролитой крови. Нет ни одного протока, реки или речки, которая не несла бы к вечному забвению сотни, тысячи мертвых тел. Нет ни одной пропасти, ни одного ущелья, которые не были бы могилами под открытым небом, в глубине которых не белели бы открытые груды скелетов, так как почти нигде убийцы не дали себе ни времени, ни труда хоронить своих жертв. В этих обширных областях, когда-то оживленных цветущими армянскими поселениями, царит сегодня разорение и безлюдье».

В рапортах и донесениях немецких послов и консулов и в других секретных документах кайзеровской Германии—союзницы Турции в годы первой мировой войны, также имеются неопровержимые данные об ужасном геноциде западных армян. Примечательно, что даже основатель турецкой республики Мустафа Кемал-паша однажды (в 1926 г.), в интервью швейцарскому журналисту Э. Гильдербранду признался, что партия младотурков «должна была отвечать за жизнь миллионов наших христианских подданных, которые безжалостно и повсеместно были изгнаны из своих жилищ и уничтожены».

Современные турецкие историки, и не только историки, стараются отрицать факт геноцида армян в Османской империи. Тщетные попытки. Фальсификаторы истории не смогут ввести в заблуждение мировое общественное мнение.